

կարգացէք, ատկէ քաղուածք ըրէք, ատկէ բօսեցէք, Եւ այն ատեն վտահ եմ թէ շատ հարստացած եւ ճոխացած պիտի գտնէք դուք զձեզ եւ շատ արդիւնաւոր եւ յաջող պիտի գտնէք ձեր գործը եւ պիտի փառաւորէք զԱստուած որմէ շնորհուած է ձեր եւ մեր սիրելի Սբ. Գրքը :

Զէյթուն

Ա. Յ. ՅԱՐՈՒԹԻՒՆՆԱՆ

ՅՈՐԵՆԵԱՆ ՏԱՐԻՆ

Հայոց գիրի գիւտին 1,500ամեակը եւ Հայ Տպագրութեան 400ամեակը տօնելու համար, ինչպէս յայտնի է, Կոճկասի եւ Ռուսաստանի Հայութեան մէջ մեծամեծ պատրաստութիւններ կը յետադիմէին : Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր պատուակալ նախագահութեան տակ Էջմիածնի մէջ յանձնաժողով մը կազմած էր, գործօն նախագահութեամբ Գալուստ սակաւագ Տ. Մկրտիչեանի, որ Հայ բանասիրութեան մէջ շատ ծանօթ զէմք մըն է եւ Հայ տառերու 1,500ամեակին այս տարի լրանալուն բանասիրական փաստերն առաջին անգամ հրատարակ հանողը : Միւսներն տօնը կատարելու համար Թիֆլիսի մէջ ալ տեղւոյն Հրատարակչական Ընկերութիւնը նախաձեռնութիւնն ստանձնած եւ կազմած էր յանձնաժողով մը : Թիֆլիսի յանձնաժողովին ծրագրին համաձայն, տօնը պիտի կատարուէր Նոյ. 26ին, իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Էջմիածնի Յանձնաժողովի որոշումով, այդ տօնախմբութեան օր որոշած էր Հոկտ. 13ը : Գարձեալ Թիֆլիսի յանձնաժողովը որոշած էր համազգային հանգանակութեամբ կազմել զբազան ֆէմ մը, մինչ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կը հրամայէր կազմել զպրոցական ֆէմ մը : Այս իրար չէզոքացնող որոշումները բնական է որ յառաջ պիտի բերէին պայքար մը Էջմիածնի եւ Թիֆլիսի յանձնաժողովներուն կուսակիցներուն միջեւ : Թիֆլիսի երկու թերթերը, Մշակ եւ Հօբէրն, երկու կուսակցութեանց արտայայտիչը եղան, եւ իրարու հետ երկար ատենէ ի վեր կը պայքարին : Մշակ կը պաշտպանէ Էջմիածնի յանձնաժողովին կարգադրութիւնները եւ Հօբէրն՝ Թիֆլիսի : Մշակ միայն վերջերս ընդգրկմադիրներու՝ տօնակատարութիւնը յետաձգելու առաջարկին համարիտ էր, բայց ո՛չ միայն մինչեւ Նոյ. 26, այլ աւելի ուշ ըլլալու պայմանով, մասնաւորապէս Հոկտ. 13ը շատ մօտ ըլլալուն, եւ Թրքահայք իրենց արդի տաղնապին մէջ մասնակցելու արամադիր ըլլալուն համար :

Վերջերս Էջմիածնի յանձնաժողովի անդամներէն Մատթէոս Վրդ. Թիֆլիս եկած ըլլալով, Թիֆլիսի յանձնաժողովն ուզած էր իր միջոցաւ Էջմիած-

նի հետ յարաբերութեան մտնել եւ իրաւախոհութեան զալ յորելանի օրուան համար :

Աս ձեռնարկը յոյս ներշնչած էր թէ ազգային քաղաքակրթութեան այս մեծ տօնին շուրջը համաձայնութիւն մը յառաջ բերէր, սակայն Թիֆլիսէն հասած թերթերէն կը տեղեկանանք թէ այս ձեռնարկը վիժած է եւ Էջմիածնի յանձնաժողովը Մատթէոս Վրդ.ի միջոցաւ եղած առաջարկները լսելէ յետոյ որոշած է՝

1. Ամբողջ տարի մը, այն է 1912 Հոկտ. 13էն մինչեւ 1913 Հոկտ. 12, համարել յորելանական տարի, ի յիշատակ Հայ գիրերու գիւտին 1,500ամեակին եւ Հայ Տպագրութեան 400ամեակին :

2. Յօրելանին բացումը կատարել հանդիսաւորապէս առաջիկայ Հոկտ. 13ին, Սբ. Թարգմանչաց տօնին օրը :

3. Յօրելանին հանդիսաւոր փակումը կատարել 1913 Հոկտ. 12ին, գարձեալ Սբ. Թարգմանչաց տօնին օրը, հրաւիրելով հաղէսին՝ ըստ նշանաւոր հայագէտները, բանասէրները, առանց դաւանութեան խտրութեան, ինչպէս եւ օտարազգի նշանաւոր հայագէտները, նաեւ ազգային բոլոր կրթական, լուսաւորական, բարեգործական, գիտական ու կուլտուրական հաստատութեանց ներկայացուցիչները :

4. Ամբողջ տարուան ընթացքին մէջ կատարել հանգանակութիւն յօգուտ դպրոցական ֆէմի, ըստ առանձին հրահանգի, որ կը մշակուի հանգանակութեան թոյլատուութիւնը Փոխարքայէն ստանալէ յետոյ :

5. Ամբողջ տարուան ընթացքին յարաբերութեան մէջ մտնել բոլոր հաստատութիւններու հետ, որպէս զի 1913 Հոկտ. 12ի հանդէսը ըլլայ արդարեւ համաժողովրդական եւ համազգային :

Էջմիածնի յանձնաժողովին այս որոշումը հաստատուած է Ամենայն Հայոց Կաթողիկոսէն : Սակայն եթէ մինչեւ այս առաջիկայ Հոկտ. 13ը նորանոր աւելի յուզիչ տեղեկութիւններ հասնին Թուրքիոյ Հայոց մասին, այդ պարագային հանդէսը կարող է փակուիլ ի նշան սուգի ու բողոքի :

Էջմիածնի յանձնաժողովը այս առթիւ մշակած է ծրագիր մը որ բաժնուած է երկու մասի. — 1. Էջմիածնէն դուրս կատարելի տօնակատարութիւնը, 2. Էջմիածնի մէջ կատարուելիք հանդէսները : Սբ. Էջմիածնէն դուրս պիտի տօնուի այսպէս,

1. Բոլոր եկեղեցիներուն մէջ Սեպտեմբերի 30ին եւ Հոկտ. 7ին կիրակի օրերը ծանուցում ընել ժողովուրդին՝ Հոկտեմբերի 13—14ին կատարուելիք հանդէսներուն մասին :

2. Հոկտ. 13ին, շաբաթ, Թարգմանչաց տօնի օրը հանդիսաւոր պատարագ մատուցանել և քարոզին մէջ բացատրել երկու մեծ տօներու պատմական նշանակութիւնը, դրուատելով Սբ. Մեսրոպի և Սբ. Սահակի, Թարգմանչաց և տպագրութեան արուեստի զլխաւոր վաստակաւորներու յիշատակը: Պատարագէն յետոյ հոգեհանդիստ ընել Հայ դրականութեան և տպագրութեան վաստակաւորներուն համար: Պատարագին և հոգեհանդիստեան ներկայ պիտի ըլլան եկեղեցական, դպրոցական և ազգային հաստատութիւններու ներկայացուցիչներն ու վարչութիւնները, ամբողջ կազմով աշակերտութեան հետ:

3. Հոկտեմբեր 14ին, Կիրակի, հանդիսաւոր պատարագ և ապա Հայրապետական մաղթանք, նոյն կազմով:

Պատարագէն յետոյ, ցերեկը կամ երեկոյեան՝ տեղական յարմարութեան համաձայն պիտի կատարուի դպրոցական հանդէս, եկեղեցական, կրթական և այլ ազգային հաստատութիւններու, պաշտօնատար անձներու ներկայութեամբ: Հանդէսը պիտի բացուի «Հայր մերով» և ճեմանեալ Մովսէսի» Թարգմանչաց շարականով: Պիտի ըլլան պատշաճ բանախօսութիւններ տօնին նշանակութիւնը բացատրող, մէջընդմէջ ստանաւորներով, երգերով և նուագածութեամբ, ուր որ կարելի է:

Հանդէսին սկիզբը կամ վերջը աշակերտութեան ձրիապէս կը բաժնուին Մայր Աթոռին այդ աթիւ հրատարակած հանրամատչելի գրքոյկները: Դպրոցական վարչութիւնները կարող են իրենց կողմէն ևս յարմար նուէրներ, գիրքեր, պատկերներ տալ սաներուն:

Բ. Էջմիածնի մէջ պիտի տօնուի հետեւեալ ձևով.

Ուրբաթ, Հոկտեմբերի 12ի երեկոյեան Ն. Վեհափառութիւնը հանդիսաւոր թափօրով կ'իջնէ Մայր Տաճար, ուր տեղի կ'ունենայ նախատօնակ' Սբ. Թարգմանչաց յիշատակին: Հետեւեալ օրը, Հոկտ. 13, հանդիսաւոր դնացք Ն. Վեհափառութեան յՉշական ուղեկցութեամբ ամբողջ միաբանութեան և պատգամաւորութիւններու:

Պատարագ Սբ. Մեսրոպի գերեզմանին վրայ: Հայրապետական մաղթանք: Պատարագէ յետոյ պատգամաւորներու բանախօսութիւններ, հետագիրներու և ուղերձերու ընթերցում Սբ. Մեսրոպի եկեղեցւոյն բակին մէջ:

Կիրակի, Հոկտ. 14ին Մայր Տաճարի իջման սեղանին վրայ հանդիսաւոր պատարագ, ապա հոգեհանդիստ գրի և տպագրութեան վաստակաւորներու

յիշատակին: Նոյն օրը պատարագէն յետոյ պիտի ըլլայ ցերեկոյթ երաժշտութեամբ և երգեցողութեամբ: Շաբաթ և կիրակի երեկոյ հրավառութիւն և երաժշտութիւն Վանքի և Ճեմարանի բակին մէջ: Այս յայտագրէն շատ պարզ կ'երեւայ թէ յոբելեանի հանդէսներուն միայն սկզբնաւորութիւնն և բացումը պիտի կատարուի Հոկ. 13ին և ամբողջ տարւոյն ընթացքին այլեւայլ տեղեր պիտի շարունակուին հանդէսները:

Էջմիածնայ Հոկտ. 13ի տօնակատարութիւնը կրօնական բացում մը միայն պիտի ըլլայ, և բուն յոբելեանական հանդէսը պիտի կատարուի համագային ընդհ. նշանակութեամբ 1913 Հոկտ. 12ին, ինչ որ ամէն կողմերուն ալ գոհացում առնող կարգադրութիւն մըն է:

«Բնփոխութիւն»

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՕՐԷՆՔԻՆ

ՊԱՏՃԱԿԱՆ ՏՐԱՄԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Զինուորական Պատժական Օրէնքին հետեւեալ տրամադրութիւնները կը հաղորդուին ձեռնհաս պաշտօնարանին կողմէ.

Յօդ. 1. Երբ զէնքի տակ գտնուող Ինթիաթ, Բէտիֆ ու Մուսթահֆըզ զինուորները յանցանք մը գործեն, անոր տեսակին ու աստիճանին համաձայն ըստ օրինի կը պատժուին յանցաւոր Նիզամիէներու պէս:

Յօդ. 2. Երբ Ինթիաթները, Բէտիֆներն ու Մուսթահֆըզները իրենց պատկանած վաշտին կեդրոնը հաւաքուելու և անոնց զրկուելիք տեղերը որոշուելու ատեն ներկայ չըլլան, բացակայութիւններն հաստատուած օրէն միջուկ կամ մասնակու և կամ բոնի իրենց պատկանած վաշտերը տարուելու օրը անցած օրերը բացակայութեան միջոց մը ըլլալով, վերոյիշեալ զինուորներն իրբեւ պատիժ նոյն միջոցին երկու անգամը, և իրենց ներկայացած օրէն միջուկ իրենց ընկերներուն արձակման ժամանակը անցնելիք միջոցին կրկին անգամը պիտի ծառայեն:

Յօդ. 3. Այն Ինթիաթները, Բէտիֆներն և Մուսթահֆըզները որ իրենց պատկանած վաշտին քանի անգամներ զէնքի տակ կոչուելուն ներկայ չըլլան, իւրաքանչիւր անգամին համար վերոգրեալ պատիժներուն ամէնուն ալ պիտի ենթարկուին, որքան ալ ըլլայ տեւողութիւնը:

Յօդ. 4. Պատերազմի ատեն ծառայութեան մէջ գտնուող ու փախչող ենթասպաները, տասնապետներն և զինուորները վեց ամիս չլթայակապ թիապարտութեան կը դատապարտուին և նորէն զինուոր կը գրուին: